

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.
Առանձին չամարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացի գիտնական և ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“.

Խմբագրատանը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտ Դարութիւնը ընդունվում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնների չամար վճարում են
կրպարանիւր բառին 2 կոպէկ:

ՄԵՆԿ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Լրագրութեան նշանակութիւնը: — Ներքին
տեսակետէն: Նամակ Լուսուց: Նամակ Աւել-
անդրապոլից: Նամակ Վերին-Ագուլիսից: Նամակ
Ախալցխայից: Նամակ Հին-Նախիջևանից: Նամակ
Գանձակից: Ներքին լուրեր: — Արտաքին տե-
սակետ: Մոկայից ցոյց: Միացեալ նաւատորմի
միջամտութիւնը: — Մշակչի հետաքրքրերը: — Յայ-
տարարութիւններ:

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Կան բոպէներ, երբ աւելորդ
է յիշեցնել մարդիկներին իրանց
պարտաւորութիւնը լրագրական
խօսքի միջոցով, ինչքան էլ բարձր
լինէր լրագրութեան նշանակու-
թիւնը: Մեր հակառակորդները,
«Մեղուն» և «Պատկ» կամենում
են մեզ բացատրել լրագրութեան
բարձր, վսեմ նշանակութիւնը:
Բայց ինչ որ իրանք մեզ են
ասում, իսկապէս նրանք քէ վե-
րաբերվում:

«Մեղուն» իր բաց նամակի
մէջ զրպարտում է մեզ որ մենք
կեղծ նամակներ ենք տպում,
այն ինչ մեր բոլոր թղթակից-
ների իսկական անունները մենք
չատ հեշտութեամբ իսկոյն կա-
րող էինք յայտնել եթէ նրանք
իրանք այդ կամենային: Լրկու
լրագիրների մէջ ծագած պոլե-
միկի ժամանակ «Մշակի» ոչ
մի թղթակցութիւն հնարված
էր, ոչ միւր գրված էր խմբա-
գրութեան մէջ: «Մեղուն» չէ
բաւականանում մեզ զրպարտե-
լով, այլ յանդգնում է յարձակ-
վել մեզ վրա, բացատրելով մեզ
թէ որքան մեծ յանցանք է կեղծ
նամակների ստեղծելը: Ըմնա-
կեղտոտ, վերաւորիչ կերպով
թիֆլիսի հայ ինտելիգենցիայի
օրգանը համեմատում է կեղծ
նամակներ ստեղծողներին անպի-
տան գողերի, վաշխառուների,
սուտ թղթադրամ շինողների,
կեղծ վկայութիւն տուողների
հետ և այլն:

Այո, կեղծ նամակ ստեղծող-
ները նոյնքան մեծ յանցաւորներ
են, որքան վերև յիշված այդ
բոլոր յանցաւորները:

Բայց բանից ինչ է դուրս
գալիս. «Մեղուն» այդ բոլորը
գրել է, նրա համար որ ծածկի
իր սեփական յանցանքը, որով-
հետև նոյն համարում ինքն ճշ-
մարիտ տպում է մի կեղծ նա-
մակ Լմիրխանեանցի անունով,
որով շօշափում է ամենամակա-
յել կերպով Լմիրխանեանցի
պատիւը, քնատ է հասցնում նրա
գործունէութեանը, նրա կեանքի
անդորրութեանը, գրգռում է
նրա դէմ ամբողջ մոլեռանդու-
թիւնը, ստուեր է գցում Լն-
դրկովկասի հայերի մի ամբողջ
աշագին խմբի, հայ աւետարա-
նականների վրա...

Եւ ճշմարիտ, այդ տեսակ
հանգամանքներում աւելորդ է լը-
րագրական պոլեմիկը, անգոր
մամուլի խօսքը, որքան էլ մեծ
նշանակութիւն ունենար լրագր-
ութիւնը: Այդ տեսակ հանգա-
մանքներում, այսինքն կեղծ նա-
մակներ տպելու յանցանքի դէմ
հնարաւոր է միմիայն օրէնքի,
դատաստանի միջոցով բացա-
տրութիւն պահանջել:

Եւ չը պէտք է մոռանալ որ
Ամենանցի յանցանքը այս-
տեղ կրկնակի է, մէկը որ նա
ստեղծում է և տպում է մի կեղծ
նամակ, որի նպատակն է սար-
սափելի քնատ հասցնել մի մար-
դուն և մի սկզբունքին և երկ-
րորդ՝ որ նա նոյն իսկ այդ իր
յանցանքը ծածկելու համար,
մեղադրում է ուրիշն, թէ նա
է կեղծ նամակներ ստեղծողը և
իւր թէ արդար վրդովմունքով,
ազնի մարդու զայրացմամբ, դը-
րօշմում է ամօթի դրօշմով ուրիշի
արածը...

Ուրեմն ո՛ր աստիճանի անբա-
րոյականութեան է հասած ո-
ղորմելի հայոց մամուլը: Այն
մարդը որի համար սովորական
բան է կեղծ նամակներ շինելու
յանցանքը, այդ տեսակ մարդ
չատ հեշտութեամբ, ի հարկէ,
կարող է ժամանակով անցնել և
դէպի ուրիշ աւելի խոշոր յան-
ցանքներ...

Բայց ամենասարսափելին այն
է որ այդ տեսակ մարդիկ դեռ
երես ունեն խօսել բարոյակա-
նութեան վրա և ուրիշներին
մեղադրել:

Այո, կան հանգամանքներ,
որտեղ լրագրութիւնը անգոր է:
Այդ տեսակ հանգամանքներում
լրագիրը պիտի լու և խօսէ
դատաստանը, լրագրական ա-
պարդին վէճի տեղը պէտք է
բանի դատարանը:

Եւ ճշմարիտ, ինչ երաշխա-
ւորութիւն կայ խաղաղ քաղա-
քացու համար, եթէ կեղծ նա-
մակներ ստեղծելը սովորական
կը դառնայ մեր մամուլի կողմից:
Այսօր Լմիրխանեանց, վաղը մի
ուրիշը զո՞ք կը դառնայ մամուլի
անսանձ կրքերի: Եւ ահա, մի
նոր, կատարելապէս անբարոյա-
կանացնող ոգի կը սկսէ տիրել
մեր լրագրութեան մէջ: Մինը
միանց օրինակ կառնեն և այլ
և ոչինչ երաշխաւորութիւն չի
լինի, ոչ որի համար, որ և դա-
ւառական թղթակիցները իրանց
անձնական թշնամուն քնատ հա-
ցնելու նպատակով, չեն դիմի նոյն
միջոցներին, կեղծ նամակների ըս-
տեղծելուն:

Եւ այն ժամանակ լրագրու-
թիւնը փոխանակ բարոյակա-
նացնող միջոցի, կը դառնայ ա-
մենանբարոյականացնող հաս-
րակական միջոց:

Այդ տեսակ հրեշաւոր ազդու-
թեանը վերջ դնելու համար,
նրան սանձահարելու համար մի-
միայն մի ելք կայ, — այն է դի-
մել օրէնքների արդարադատու-
թեանը:

Լուեցիներին արեւարու հասանալի բարո-
ւորութիւնների դէմ: Այսօր Լուու լիշանների
արեւում շաղկապած այդ հնազարեան ընդդի-
մայն նրա պարիսպներ կիսակործան հնաքերն
են նշմարվում, որոնք նայողին առաւել ցաւ են
պատճառում, քան ուրախութիւն:

Այդտեղ այժմ բնակվում են մի քանի հայ տներ
որոնք պարպաւում են երկրաշարժութեամբ և անաս-
նապահութեամբ:

Կիւլիս հարաւ-արեւելեան կողմը ձգված ըն-
դարձակ դաշտավայրի վրա իսկոյն մարդու աշ-
քին է բնակում մի կնոստան բարձր ըրակ, այդ
ուրը Սարգիս անուանած ուխտատեղին է: Հիւ-
նալի է դրա տեսարանը մանաւանդ տոնի օրը, որ
հեռու ըրակի շուրջ ամեն մի ծառի տակին
ցորենակ աղտորակների միջին ուխտատեղինը
խումբ խումբ ժողոված քեֆ են անում դուռնայով
և ամեն մի խմբի միջից բարձրանում է ողորկելով,
մատաղների խմբը ծովը, միւս կողմէն էլ ուխ-
տաւոր հարսեր և աղկիւր, գոյնզգոյն շորերով
զարդարված, բարձրանում են ըրակի ծայրը օձա-
պտոյտ ճանապարհով դէպի ուխտատեղին:

Ըրակի ծայրին բացի մանր աւերակներից կայ
և բաւականին մեծ, սեպտոյն օրըստաշ քարերից
մի աւերակ, առանց առաստաղի: Երկուսեան հա-
րաւային կողմի ճակատի վրա դեղնադոյն քարի
վրա հայերեն տառերով գրված մի քանի տող
գրութիւն կայ: Տեղւոյ տրուած. Սարգիսը ինձ
ասաց որ դա ամբար էր հայի, միայն թէ այդ
վրայ ինչ ինձ կասկածելի է լիւում, որովհետև
չատ դեղնեղիկ շինութիւն է և առաւել տան է մի
վիշաբանի, քան ամբարի:

Նոյն իսկ ուխտատեղում մի փոքրիկ խորան
կայ, որ թաղած են տուր Սարգիսի մատուցը:
Սա Լուու մեծ ուխտատեղերից միւն է, նա
տարեկան մօտ 300 ռուբլի արդիւնք ունի:

Որքան մեղ ուրախուի էր տեսնել այդ տեղ
բազմաթիւ ժողովուրդը հեռաւոր գիւղերից
եկած, իրանց բարեպաշտական պաշտօնը կատար-
ելու, այնքան և տիրաւի էր երբ տիրացու Սար-
գիսը յայտնեց ինձ որ այդ բոլոր արդիւնքը դը-
նում է Թիֆլիս Ներքինեան ուսումնարանը: Զար-
մանայի երդութիւն, — ինչու պէտք է Ներքինեան
ուսումնարանը դնայ, քանի որ ուխտատեղոյ մը-
ծակայ գիւղերը առաւել կարօտութիւն են զգում
ուսումնարանի, քանի որ այստեղի մատաղահաս
մանուկները դուրի են մնում իրանց մայրնի լը-
ղով ուսումնից:

Տօնի օրը Զաւար-Սղեղի և Գաղգարեցի երիտա-
ւարները մեծ անկապութիւններ են անում —
միմիայն վրա աղջկանային արձակում, մի-
մանց հետ կուտում, միմանց ծնծում, հարած
չխաղաւ անում, որդէս դի իրանց և ձիա-
ների քաջութիւնները ցոյց տան, բայց շատ
անգամ կամ իրանք են մնալու, կամ կանանց
են դրում ձիաների ոտքի տակ և շարք ու բուրթ
անում: Այս տաղան տօնին մի շուրջակցից պարսն
եկել էր և կամենալով ուխտատեղին ընդ տալ իր
քաջութիւնը, ձիուց վայր ընկաւ և ոտը կտորեց:

Կ. Շախատուրեանց

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԱՆԻՔԱՆԻՔԱՆՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 15

Վերջին ժամանակ Վեդուիչ և Մշակչի մէջ
վիճաբանութիւն ծագեցաւ կրօնի և խորհի աղա-
սութեան մասին: Վեդուիչն շատաստում է, որ
հայերից պաշտօնված կրօնի ազատութիւնը չարի-
ւանց է և հաստատ է անտարբերութեան պա-
հանելուն դէպի իրանց ազգային եկեղեցին, որով
պիտի թող տրվէր անտարբերականներին և այլոց
մանեւ հայ եկեղեցին և այն տեղից յայտարարու-
միւնքներին: Յետոյ անկապնում է ինչ հայ (լու-
սաւորական եկեղեցին է եղել ազգի պաշտօնուն,
ուստի և է: Բայց ինչ որ եղել է, չէ նշանակում որ
հիմայ էլ կայ: Յետոյ գալով ազգութեան խնդրին,
հաստատեցում է, որ կրօնը ազգութեան յատկա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԼՈՒՈՒՆՑ

16 սեպտեմբերի

Լուու ամենայնայն և չքաւոր գիւղերից միւր
Լուու-երկր անուանած փոքրիկ գիւղն է: Այդ այն
երկրն է, որ քանի մի հարկւրակ տարի ապանից
առաջ հսկայի պէս պաշտպանելու է եղել իր ա-
մուր գաղտնիքով շինված, զատ պատերի մէջ

